ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 7

**25.12.2025Թ. ԿՆՔՎԱԾ N «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-3» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Չարենցավան «26» 01 2026թ.

Չարենցավանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Հ. Կ. Շահգալդյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ 1»), մի կողմից, և «ՖՈՒԴ ՄՈՒԴ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Թ. Հովհաննիսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 25.12.2025թ. կնքված N «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-3» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.1.1-րդ, 8.5-րդ, 8.15-րդ կետերը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը որոշեցին՝

1.1 Սույն համաձայնագրով նախատեսված «Գնորդ 1»-ի իրավունքներն ու պարտականությունները գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերապահվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական գյուղի մսուր մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ «Գնորդ 2»):

1.2 Հաստատել գնման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի (Հավելված 1-ը կցվում է):

1.3 Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը (վճարման ժամանակացույց)՝ համաձայն կից հավելվածի (Հավելված 2-ը կցվում է):

1.4 Ապրանքը համաձայնագրով սահմանված ժամկետում «Վաճառող»-ի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 2 (երկու) օրից ավելի:

1.5 «Վաճառող»-ի կողմից համաձայնագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել «Գնորդ 2»-ի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 (երկու) օրից ավելի:

1.6 Համաձայնագրի գինը կազմում է 64904.5 (վաթսունչորս հազար ինը հարյուր չորս դրամ հիսուն լումա) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն:

Համաձայնագրի գինը ներառում է համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով «Վաճառող»-ի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և «Վաճառող»-ն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ «Գնորդ 2»-ը նվազեցնելու այդ գինը:

1.7 «Գնորդ 2»-ն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները «Վաճառող»-ի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին, 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

1.8 Մատակարարված ապրանքն ընդունվում է «Գնորդ 2»-ի և «Վաճառող»-ի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը «Գնորդ 2»-ին հանձնելու փաստը ֆիքսվում է «Գնորդ 2»-ի և «Վաճառող»-ի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև համաձայնագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ «Վաճառող»-ը «Գնորդ 2»-ին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը «Գնորդ 2»-ին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված 3):

1.9 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է համաձայնագրի պայմաններին: Հակառակ դեպքում համաձայնագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և «Գնորդ 2»-ը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար համաձայնագրով նախատեսված միջոցները.

բ) «Վաճառող»-ի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

1.10 «Գնորդ 2»-ը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում «Վաճառող»-ին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

1.11 Եթե համաձայնագրի 1.10 կետով սահմանված ժամկետում «Գնորդ 2»-ը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և համաձայնագրի 1.10 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը «Գնորդ 2»-ը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածները կազմված են 6 (վեց) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**«ԳՆՈՐԴ 1»**
**Չարենցավանի համայնքապետարան**
**ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1**
**ՀՀ ՖՆ ԳՎ**
**Հ/Հ 900132111023**
**ՀՎՀՀ 03022497**

**Համայնքի ղեկավար՝**
**Հ. Կ. Շահգալդյան**

______________________
(ստորագրությունը)
Կ.Տ

**«ԳՆՈՐԴ 2»**
**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական գյուղի մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ**
**գ. Արզական**
**Բաբաջանյան փողոց թիվ 3**
**«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ**
**Հ/Հ 16028401101400**
**ՀՎՀՀ 02807295**

**Տնօրեն՝ Ա. Հովսեփյան**

______________________
(ստորագրությունը)
Կ.Տ

**«ՎԱՃԱՌՈՂ»**
**«ՖՈՒԴ ՄՈՒԴ» ՍՊԸ**
**ք. Երևան, Ավան, Հովհաննիսյան 24/7**
**«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ**
**Հ/Հ 19300658434900**
**ՀՎՀՀ 01040645**
**էլ. հասցեն**
**foodmood1@yandex.com**
**հեռ. (+37410) 62-49-66**

**Տնօրեն՝ Թ. Հովհաննիսյան**

______________________
(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված N 1
25.12.2025թ. կնքված «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-3» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
«26» 01 2026թ. կնքված թիվ 7 համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 26 | 03221100/502 | Բազուկ, ուշահաս | կգ | 173.24 | 10394.4 | 60 | գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3 | 60 | 2026 թվականի հունվար-մայիս, սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներ |
| 80 | 15331154/502 | Ոլոռ, կանաչ | կգ | 395 | 5925 | 15 | գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3 | 15 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 84 | 15331153/501 | Ոսպ, կանաչ | կգ | 591.59 | 17747.7 | 30 | գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3 | 30 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 90 | 15623200/501 | Սպիտակաձավար | կգ | 421.87 | 8437.4 | 20 | գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3 | 20 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 91 | 15619000/501 | Հաճարաձավար | կգ | 340 | 13600 | 40 | գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3 | 40 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 92 | 15618000/501 | Բլղուր | կգ | 440 | 8800 | 20 | գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3 | 20 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |

| | | |
|---|---|---|
| «ԳՆՈՐԴ 1»<br>Չարենցավանի համայնքապետարան<br>ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1<br>ՀՀ ՖՆ ԳՎ<br>Հ/Հ 900132111023<br>ՀՎՀՀ 03022497<br>Համայնքի ղեկավար՝<br>Հ. Կ. Շահգալդյան<br>__________<br>(ստորագրությունը)<br>Կ.Տ | «ԳՆՈՐԴ 2»<br>ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական գյուղի մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ<br>գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3<br>«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ<br>Հ/Հ 16028401101400<br>ՀՎՀՀ 02807295<br>Տնօրեն՝ Ա. Հովսեփյան<br>__________<br>(ստորագրությունը)<br>Կ.Տ | «ՎԱՃԱՌՈՂ»<br>«ՖՈՒԴ ՄՈՒԴ» ՍՊԸ<br>ք. Երևան, Ավան, Հովհաննիսյան 24/7<br>«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ<br>Հ/Հ 1930065843490<br>ՀՎՀՀ 01040645<br>էլ. հասցեն<br>foodmood1@yandex.com<br>հեռ. (+37410) 62-49-66<br>Տնօրեն՝ Թ. Հովհաննիսյան<br>__________<br>(ստորագրությունը)<br>Կ.Տ |

Հավելված N 2
25.12.2025թ. կնքված «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-3» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
«26» 01 2026թ. կնքված թիվ 7 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| | | | Ապրանքի | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թվականին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 26 | 03221100/502 | Բազուկ, ուշահաս | 10394.4 | 10394.4 | 10394.4 | 10394.4 | 10394.4 | 10394.4 | 10394.4 | 10394.4 | 10394.4 | 10394.4 | 10394.4 | 10394.4 | 10394.4 |
| 80 | 15331154/502 | Ոլոռ, կանաչ | 5925 | 5925 | 5925 | 5925 | 5925 | 5925 | 5925 | 5925 | 5925 | 5925 | 5925 | 5925 | 5925 |
| 84 | 15331153/501 | Ոսպ, կանաչ | 17747.7 | 17747.7 | 17747.7 | 17747.7 | 17747.7 | 17747.7 | 17747.7 | 17747.7 | 17747.7 | 17747.7 | 17747.7 | 17747.7 | 17747.7 |
| 90 | 15623200/501 | Սպիտակաձավար | 8437.4 | 8437.4 | 8437.4 | 8437.4 | 8437.4 | 8437.4 | 8437.4 | 8437.4 | 8437.4 | 8437.4 | 8437.4 | 8437.4 | 8437.4 |
| 91 | 15619000/501 | Հաճարաձավար | 13600 | 13600 | 13600 | 13600 | 13600 | 13600 | 13600 | 13600 | 13600 | 13600 | 13600 | 13600 | 13600 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 92 | 15618000/501 | Բլղուր | 8800 | 8800 | 8800 | 8800 | 8800 | 8800 | 8800 | 8800 | 8800 | 8800 | 8800 | 8800 | 8800 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով՝ ըստ փաստացի մատակարարված խմբաքանակների:

«ԳՆՈՐԴ 1»
Չարենցավանի
համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան
հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132111023
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝
Հ. Կ. Ճահգալդյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ԳՆՈՐԴ 2»
ՀՀ Կոտայքի մարզի
Չարենցավան համայնքի
Արզական գյուղի մսուր
մանկապարտեզ ՀՈԱԿ
գ. Արզական
Բաբաջանյան փողոց թիվ 3
«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 16028401101400
ՀՎՀՀ 02807295

Տնօրեն՝ Լ. Հովսեփյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ՎԱՃԱՌՈՂ»
«ՖՈՒԴ ՄՈՒԴ» ՍՊԸ
ք. Երևան, Ավան,
Հովհաննիսյան 24/7
«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1930065843490
ՀՎՀՀ 01040645
էլ. հասցեն
foodmood1@yandex.com
հեռ. (+37410) 62-49-66

Տնօրեն՝ Թ. Հովհաննիսյան

(ստորագրությունը)
Կ.Տ